21AG-6A080

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը.

հետազոտության ընթացիկ արդյունքները

Ռոման Հովսեփյան, Արսեն Բոբոխյան, Բորիս Գասպարյան, Անի Սարատիկյան, Հասմիկ Գալստյան, Ավետիս Գրիգորյան, Տորք Դալալյան

Հետազոտությունների նպատակը

Նախագծի (ԳԿ21AG-6A080) նպատակն է՝ հետազոտել ՀՀ տարածքում և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհում ապրած և ապրող հասարակությունների ջրօգտագործման մշակույթների հիմնական առանձնահատկությունները՝ կենտրոնանալով հիմնականում ՀՀ տարածքի և հայաստանցիների վրա:

Մեր ներկա հետազոտական թեմաներն են.

1) գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները՝ պայմանավորված ջրային պաշարների հասանելիությամբ,

2) ջրօգտագործման մշակույթին առնչվող պաշտամունքային կոթողները և ծիսական լանդշաֆտը,

3) ջրամերձ լանդշաֆտների օգտագործման մշակութային ասպեկտները,

4) ջրային պաշարների օգտագործումը սահմանային շրջաններում,

5) ջրամատակարարման և ոռոգման համակարգերը,

6) ջրին առնչվող ծեսերը և հավատալիքները գյուղատնտեսության, բժշկության և կենցաղի ոլորտներում,

7) աղբյուրները՝ հուշաղբյուրները, բուժիչ աղբյուրները և այլն,

8) ջրին առնչվող առասպելական պատկերացումները և ջուրը բանահյուսական տարբեր ժանրերում:

Հետազոտությունների թիրախը, մոտեցումները և մեթոդները

Հետազոտության առարկան - Մեր հետազոտությունների թիրախում է ***ջրօգտագործման մշակույթը իր ամենաբազմազան դրսևորումներով***՝ հիմնականում սոցիալական և մշակութային գործընթացները ջրային ռեսուրսների հայտնաբերման, պաշարման և օգտագործման շուրջ, հետազոտական խնդիրներ որոնք առնչվում են ոռոգմանը և ոռոգման համակարգերին, երկրագործությանը և գյուղատնտեսության այլ ճյուղերին, միգրացիաներին, հավատալիքների և ծեսերի ջրին առնչվող հատվածներին, լեզվամտածողությանը, խմիչքների օգտագործմանը և այլն:

Հետազոտվող տարածքը – Հետազոտությունները, մասնավորապես դրանց մերօրյա մշակութային գործընթացներին և երևույթներին վերաբերվող մասը, կատարվում են ***ՀՀ տարածքում և Արցախում***, սակայն դիտարկելու ենք նաև ընդհանուր ***Հայկական Լեռնաշխարհին*** վերաբերվող տվյալները:

Հետազոտվող ժամանակաշրջանը – Հետազոտությունների համար կիրառում ենք սինխրոնիկ և դիախրոնիկ մոտեցում: Դիախրոնիկ հետազոտությունների համար իրականացնում ենք հնագիտական և այլ պատմագիտական ուսումնասիրություններ: Սինխրոնիկ հետազոտությունների համար կատարում ենք ազգագրական-բանահավաքչական աշխատանքներ և դրանց վերլուծություն սոցիալ-մշակութային մարդաբանության մեթոդներով: Կարճ ձևակերպմամբ՝ հետազոտում ենք ***քարի դարից մինչև մեր օրերը***:

Հետազոտվող ժողովուրդները - Մերօրյա խնդիրներին վերաբերվող հետազոտությունները կատարվում են հիմնականում ***հայերի*** շրջանում. սակայն քննության կառնվեն նաև հայերի հետ և կամ ***Հայկական լեռնաշխարհում ապրող այլ ազգությունների*** ներկայացուցիչների ջրօգտագործման մշակույթի առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդները - Կիրառվում են մի քանի գիտաճյուղերի՝ հիմնականում՝ ***հնագիտության, սոցիալ-մշակութային մարդաբանության և բանագիտության*** ոլորտներում ընդունված մեթոդներ, ինչպես նաև վերոնշյալ գիտաճյուղերի և պատմագիտության, լեզվաբանության, հիդրոլոգիայի, էկոլոգիայի, կենսաբանության, երկրաբանության, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի և այլ գիտությունների միջգիտակարգային մեթոդներ:

21AG-6A080

Վիշապաքարերի տարածումը և տիպաբանությունը

(Ա. Բոբոխյան և այլք)





Երկու սերտ ազգակցական նորածինների թաղում Լճաշենի վիշապաքարի տակ

(Միջին Բրոնզի դարաշրջան, մ.թ.ա. 16րդ դար)









Երկու սերտ ազգակցական նորածին աղջիկների թաղում Լճաշենի վիշապաքարի տակ



21AG-6A080

Կարմիր Սար հնավայր





21AG-6A080

Կարմիր Սար հնավայր, Պեղավայր J

Տարածքը մինչև պեղելը, պեղումների ընթացքը և ոսկորների պեղված շերտը

Արագածի հարավային լանջերի 12 բանդերը (ջրանցքները)











21AG-6A080

Ուսումնասիրվում են Սևանի ավազանի՝ ջրօգտագործման մշակույթին առնչվող հուշարձանները



Արտանիշի հնավայրերը

21AG-6A080

Դրվագներ
Ադա մենաստանի (Արտանիշ) հնագիտական հետազոտությունից, 2022 թ.

21AG-6A080

ՍՈԹՔ ԳԱՎԱՌԻ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

№ 7

* Ս. Բեթղեհեմ եկեղեցի, գ. Խաչաղբյուր

** Հին ջրաղացքար, գ. Դրախտիկ

*** Ձիթհանի աղացքար, գ. Փոքր Մասրիկ

**** Նավակի խարիսխ, գ. Կարճաղբյուր

***** Խորտակված թիանավակ (C14 - XVII-XX դդ.)

21AG-6A080









Սևանա լճի ափամերձ գոտիներից հայտնաբերված նավակի խարիսխներ

21AG-6A080

Քարե արձան-կուռքեր, Կոթի (Տավուշ), 2021թ.

№ 1 Ձկնակերպ,
№ 2 Մարդակերպ-ձկնացլակերպ

№ 1

№ 2

21AG-6A080

Հիմնական կլիմայական իրադարձությունները և մշակաբույսերի կազմը Հարավային Կովկասում նախապատմական ժամանակներում



21AG-6A080

Հարավային Կովկասի բրոնզեդարյան երկրագործության ձևավորման սխեմատիկ արտահայտությունը

Կուր-արաքսյան մշակույթային համալիր
(լեռներում?)



21AG-6A080

Անձրևի ծեսեր.

Տիկնիկ ճոլի, խաճաճոլի,
ղոդի, գոդի, նուրի
(հայերի մոտ)
բուկա բարանե
(եզդիների և քրդերի մոտ)

կաթնավով մատաղ
(նկարը՝ Գորիսի գ. Ակներ)

խաչքար/սրբավայր-
աղբյուր/գետ

և այլն

«Ձուր/քար» տիպի անձրևի ծեսերը. դրանց ծագման և փոխակերպման հարցի շուրջ
(Սիսիանի Լորաձորի Եղյակի սրբավայրի օրինակով)

Սյունիքի Եղյակ սրբավայրի տեղադրությունը

Սյունիքի Լորաձոր գետի համայնապատկերը՝ արված Եղյակ սրբավայրից (a) և սրբավայրը (b).

Անձրևի ծեսի շրջանակում գետից սրբավայր բերված քարերից մեկը, որը դրված էր մոմավառության համար ծառայող հարթակի տակ:

Կայծակահարված ցից քարեր, վիշապաքարեր, մենհիրներ, խաչքարեր, …

21AG-6A080

Աղբյուրը որպես սինկրետիկ երևույթ.

սրբավայր, հուշարձան, մասնավոր **vs.** հանրային, ժամանցի վայր

Սրբավայր-աղբյուր

Սուրբ աղբյուր

Ժամանցի վայր

մասնավոր vs. հանրային

Խաչքար աղբյուր

Սրբավայր-աղբյուր



Հուշարձան խաչքար աղբյուր

Հուշարձան-աղբյուր

Հուշարձան աղբյուր

Հուշարձան-աղբյուր

Ուսումնասիրվում են միջնադարյան ջրանցքները

Մաքենյաց վանքը, Սևանա լիճը և հնագույն ջրանցքը

ԿԳՄՍ նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության արխիվ, հաշվառանիշեր՝ Լ 36.2, Լ 36.2

Խորհրդային Հայաստանում 20-րդ դարասկզբին իրականացված խոշորագույն ձեռնարկներից մեկը՝ Շիրակի ջրատարը (ՇիրԿանալը)

Ախուրյանի ջրամբարը



ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտությունների ընթացիկ արդյունքները ցույց են տալիս, որ ջրօգտագործման մշակույթի առանձին տարրերը և մշակույթն ընդհանրապես ձևավորվում է տվյալ տարածքի միջավայրային պայմաններին համապատասխան և ձևավորումից անմիջապես հետո ընդհանրական է լինում այդ միջավայրային պայմաններում ապրող տարբեր հասարակությունների համար: Հետագայում տարբեր հասարակություն-ներում ջրօգտագործման մշակույթը տարբեր ձևերով և ծավալներով փոփոխվել և փոփոխվում է՝ հարմարվելով տվյալ հասարակության կենսակերպային, ազգային, կրոնական և այլ սոցիալ-մշակութային առանձնահատկություններին:

Երկրի և տարածաշրջանի անցյալ և ներկա հասարակությունների ջրօգտագորման մշակույթների մասին գիտելիքներին տիրապետելը, դրանց վերլուծությունը, ընդհանրությունների դուրսբերումը և մեկնաբանությունը կարող են որպես գործիք ծառայել ՝ գլոբալ ջերմացման և ջրային ռեսուրսների պակասելու ընթացիկ իրավիճակում ներկա հասարակությունների վարքագիծը հասկանալու, կանխագուշակելու և կառավարելու համար:

21AG-6A080

Հետազոտությունների արդյունքների հանրայնացումը
2024-2025 թթ. գիտական հրապարակումները

1. Wilkinson K.N., ... **Gasparyan B.**et al. **2025**. The geoarchaeology, chronology and environment of Lusakert-1, a Late Middle Palaeolithic rockshelter (Kotayk Province, Armenia). *Quaternary Environments and Humans* 3(1): 100054
2. Brittingham A., ... **Gasparyan B.**, Malinsky-Buller A. **2025**. Locally produced leaf wax biomarkers in the high-altitude Areguni Mountains outweigh downstream transport. *Biogeosciences* 22: 831–840. (Q1)
3. Adler D.S., Cullen V.L., Wilkinson K.N., **Gasparyan B.** et al. **2025**. Not by chemistry alone: Tephrostratigraphy, correlation, and context at two Palaeolithic sites in the southern Caucasus and Armenian Highlands. *Quaternary Science Reviews* 356: 109292. (Q1)
4. Carrasco R.M., ... **Gasparyan B.** et al. **2025**. Geomorphology, first 36Cl datings and chrono-evolutionary model of Mount Aragats paleoglaciers (Armenia). *Quaternary Science Reviews* 361: 109404. (Q1)
5. Gurzadyan V., **Bobokhyan A. 2025**. Vishap stelae as cult dedicated prehistoric monuments of Armenian Highlands: data analysis and interpretation. *npj Heritage Science* 13: 435. (Q1)
6. Vainer Sh, Brittingham A., Karampaglidis Th., **Gasparyan B.** et al. **2025**. The Genesis and Environmental Context of Hypogene-Sourced Terrestrial Carbonates of the Middle Pleistocene in Vedi, Ararat Depression. *Quaternary Science Reviews* 369: 109596. (Q1)
7. Gevorgyan H., ... **Gasparyan B.** Et al. **2025**. Lithostratigrapy, Geochronology and Early Humans: The evolution of the Quaternary volcanic successions and their impact on archaeological sites in the north-western edge of the Ararat Depression, Armenia. *Quaternary Science Reviews* 369: 109623. (Q1)
8. **Բոբոխյան Ա.**, Պետրոսյան Ա. **2025**. Ընձառյուծը Հին Հայաստանի մշակութային համատեքստում. *Լրաբեր հասարակական գիտությունների* 2025-1: 184-211:
9. **Bobokhyan A.**, Hnila P. Gilibert A. **2024**. *“Scientific Adventures” of Atrpet and the Discovery of Vishap Stelae*. Yerevan-Venice-Berlin, IAE Publishing, 125 p. (գիրք):
10. Avetisyan H., Gnuni A., Sargsyan G., Mkrtchyan L., **Bobokhyan A. 2025**. *Megalithic Culture of Artsakh*, Yerevan, IAE Publishing, 159 p. (գիրք):
11. Tcholakian H.M., **Galstyan H.H. 2025**. Shvot and Ishvut: a comparative analysis of Armenian lower mythological characters. *History, Archeology and Ethnography of the Caucasus* 21(3): 608-617. (Q1)

Հետազոտությունների արդյունքների հանրայնացումը

Ելույթներ գիտաժողովներում

1. 2024.10.12-10 – "**The water construction process in Armenia according to the 20th century archival data**", Galstyan H., Saratikyan A. *The 9th international scientific conference Archival and source studies trends and challenges, Archive conference*. Tbilisi, Georgia.
2. 2024.12.20 – «**Ջրի տակ անցած ժառանգությունը լեռներում. ջրածածկ հուշարձանների պահպանության միջազգային և հայկական փորձը**», Մարտիկյան Ա., Գրիգորյան Ա., *«Մեծամորյան ընթերցումներ - 3» գիտաժողով:*
3. 2025.02.07-05 – "**The Role of the Hrazdan river in shaping Yerevan's Ancient environment in the 1st Millennium BC**". Saratikyan A., Danielyan H., Badalyan M. *19th Conference of Environmental Archaeology: Archaeology of Resources*. Nitra, Slovakia.
4. 2025.04.18 - «**Գնիշիկ գետի կիրճի՝ Օրբելյանների ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական սկզբնաղբյուրները**». Գասպարյան Բ. և այլք, *«Օրբելյան իշխանական տունը Հայաստանի պատմության մեջ. Պահպանելով պատմամշակութային ժառանգությունը և վերագնահատելով անցյալը»:*
5. 2025.08.15 – **««Ծարավ աղբյուր». ծիսական աղբյուրից քաղաքային թաղամաս»**, Գալստյան Հ. *«Ազգագրական-բանագիտական ընթերցումներ» հանրապետական 5-րդ գիտաժողով*, Գյումրի, ՀՀ:
6. 2025.02.14 – "**Submerged and Sunken Heritage in The Mountains of Armenia: The Study, Relocation, and Preservation of Underwater Monuments**", Grigoryan A., Martikyan A., *"Maritime Archaeology in the South Caucasus and Beyond: Current Insights, Challenges and Future Directions"*, The Caucasus Through Time Network, Online.

Այլ բանավոր հանրայնացումներ (բացի գիտաժողովներից)

1. 2024.10.20 - «**Շիրակի ջրանցքի կառուցման 100-ամյակին ընդառաջ**», *Հասմիկ Գալստյան*, «Դեղձ փառատոն», CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում:
2. 2024.10.31 – «**Ինչպես են ջուրն օգտագործել մեր նախնիները**», *Անի Սարատիկյան*, «Հայագիտակ» հաղորդաշար, Հայաստանի ռադիո:
3. 2024.11.26 – «**Պահպանելով ջրանցքները՝ չկորցնել ջրի ոչ մի կաթիլ. Միջնադարյան Հայաստանի ջրօգտագործման մշակույթը**», *Բորիս Գասպարյան*, «Հայագիտակ» հաղորդաշար, Հայաստանի ռադիո:

«Զրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (ԲԿԳԿ ԱՀ 21AG-6A080) **գիտական ծրագրի արդյունքները թվերով**

Հաշվետու տարի	**I (2021-22)**	**II (2022-23)**	**III (2023-24)**	**IV (2024-25)**	**Ընդամենը (2021-25)**
Հոդված – Q1		**1**	**2**	**7**	**10**
Հոդված – Q2					**0**
Հոդված – Q3					**0**
Հոդված – Q4					**0**
Հոդված - Scopus, պարբերական					**0**
Հոդված - Scopus, ժողովածու		**2**			**2**
Հոդված - պարբերական, միջազգային		2	1	1	**4**
Հոդված - ժողովածու, միջազգային					**0**
Գիրք - ՀՀ		1		2	**3**
Թեմատիկ ժողովածու - ՀՀ		1		1	**2**
Հոդված - ՀՀ պարբերական, in English		1			**1**
Հոդված - ՀՀ պարբերական, հայերենով	1	9		1	**11**
Հոդված - ՀՀ ժողովածու, in English					**0**
Հոդված - ՀՀ ժողովածու, հայերենով		6		11	**17**
Հոդված - Գիտահանրամատչելի, in English		1			**1**
Հոդված - Գիտահանրամատչելի, հայերենով		1	1		**2**
Թեմատիկ գիտաժողով		1			**1**
Զեկուցում գիտաժողովում - ՀՀ	4	14	3	3	**24**
Զեկուցում գիտաժողովում - Միջազգային, արտերկիր	**5**	**5**		**3**	**13**
Սեմինար / Դասախոսություն - ՀՀ	5				**5**
Սեմինար / Դասախոսություն - Արտերկրում	1				**1**
Լրատվական նյութ	3	5	3	3	**14**
Պատմամշակութային ժառանգության պահպանություն		3			**3**
Այլ		1	1		**2**

Շնորհակալություն ուշադրության համար

Հետազոտությունը ֆինանսավորվում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից՝
Առաջատար հետազոտությունների աջակցության ծրագրի շրջանակներում (21AG-6A080)